

Օ Ր Ե Ր Ո Ւ Ն Տ Ո Ւ Ա Ն Ը

Գարունին հետ մօտեցող՝ նոյն իդներով հեռագին,
Նոյն տեսիլով հրաւունջ կը տօգորուի իմ հոգին.
Այն զոր անցեալն ինծի տալ անգթօրէն զլացաւ
Ես կը սպասեմ գալիքէն՝ պարզմտութեամբ մը ամբաւ:

Թէեւ օրերն այս չունին ջերմութիւնը հիմներուն,
Զունին դէմքի փալը նոյն, ժպիւնը՝ կոյս երթներուն,
Պահերն վսիտ խնդութեան՝ հուժկու բազուկն չարիքին
Թէեւ յաճախ տրուէ, բայց ես սիրով կաթոզին

Կը մեկնեմ ձեռքս անվախ օրերուն նոր ճիւղ ինչպէս
Թերթէի պիտի՝ զիրք մը նոր, շեղակազմ ու գունեղ,
Ջանալով միտս օգտուիլ բարիքներէն իր պէս-պէս:

Անցնող օրերը մինչդեռ զիս յուշեցով բազմացեղ
Կ'ընեն հարուստ ու հպարտ, գալիք օրերն կու տան խանդ,
Ու երկուսին տուածով ես կը փալեմ անվկանդ:

Ա Ն Ց Ե Ա Լ Ս

Օրերուն հետ որ կ'անցնին, մերթ ժպտադէմ, մերթ դաժան,
Ու կը զինեն զիս տակաւ փորձառութեամբ մը անգին,
Ես կը մտայիմ ընկալման կեանքի անհուն խորհուրդին,
Կ'ըլլայ անցեալս մինչդեռ յուշերու հոխ գանձառան:

Ու բանակէն արձակուած զօրականի մը նման,
Որուն հանոյքը ամբաւ ու ըսփոփանքը միակ
Վերադարձն է անցեալին, ժամանակ առ ժամանակ,
Ուր սխալի արարներ, յաղթանակներ անմահ

Իրեն շահիլ են տուած փառք ու յարգանք ու պատիւ,
Ու մեզ ա'յնքան կենսական հպարտութիւն մը արդար,
Ես ալ յաճախ կը սուգուիմ անցեալին գիրկը մեղմիւ,

Որուն հարուստ ու անմեռ յուշերու հոծ փաղանգէն
Կ'առնեմ ըսփոփ ու կազդոյր, քաղաքական տուն կենարար,
Խորհառաւտ անցնելու կեանքի «պաղէն ու տալէն»:

Գ. ՃԱՐՏԱՐ